

Կարեն Զայրապետյան

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳՆ ԲԱԹՈՒՄԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Բանալի բառեր – Զայաստանի առաջին Զանրապետություն, փախստական, գաղթ, գաղթականության հիմնախնդիր, Զայոց ազգային խորհուրդ, Բաթումի պայմանագիր, գաղթի դադարեցման հարց, հայ գաղթականների տունդարձի հարց, անվտանգության երաշխիքներ:

«Զայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար» կառավարական բոլոր գործարկյունները իրեն վերապահած Թիֆլիսի կենտրոնական Զայոց ազգային խորհուրդը¹ չէր կարող անտեսել ազգապահպանության տեսակետից կարևոր նշանակություն ունեցող և անհետաձգելի լուծումներ պահանջող գաղթականության հիմնախնդիրը: 1918թ. մայիսի վերջին այդ խնդիրը լուծելու համար անհապաղ անհրաժեշտ է եղել կանգնեցնել «հսկայածավալ գաղթականության հոսանքը»², դադարեցնելով հայ ազգաբնակչության «կորստաբեր» և «կործանարար» տեղահանությունը և գաղթը³: Միաժամանակ անհրաժեշտ էր իրականացնել գաղթականության տունդարձը⁴, քանզի ստեղծված ծանր ռազմաքաղաքական պայմաններում միայն այդպես էր կարելի փրկել մեծաթիվ փախստականներին վերահաս սովից ու համաճարակներից:

Գաղթականության հետ կապված նշված խնդիրները Զայոց ազգային խորհուրդը կարող էր լուծել միայն օսմանյան Թուրքիայի ներկայացուցիչների հետ դիվանագիտական շփումների և բանակցությունների միջոցով: Զայոց ազգային խորհուրդը պետք է կարողանար հասնել Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական իշխանությունների կողմից Անդրկովկասում իրականացվող հակահայկական քաղաքականության մեջ որոշակի տեղաշարժերի և փոփոխությունների: Տեղահանությունն ու գաղթը դադարեցնելու և հայրենի բնակավայրեր գաղթականների վերադարձը իրականացնելու համար Թուրքիայի ներկայացուցիչներից առաջնահերթ անհրաժեշտ էր ստանալ հայ ազգաբնակչության անվտանգությունը ապահովող իրական երաշխիքներ, հասնել դրանց պատշաճ ամրագրմանն ու իրագործմանը:

¹ Տե՛ս Զայաստանի Զանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, ԶԶ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն, 2000, վավերագիր 12, էջ 18:

² Տե՛ս Զայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918թ. մայիս-հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երկրորդ՝ լրացված և բարեփոխված իրատարակչություն, Երևան, «Հայկարի» տպարան, 2009, վավ. 29, էջ 74:

³ Տե՛ս Զայաստանի Զանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 11, էջ 18:

⁴ Տե՛ս Микаел Туманян, Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Ереван, Национальный архив Армении, 2012, с. 46.

Իր առաջին քայլերն այդ ուղղությամբ Նորանկախ Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտությունը կատարել է Բաթումի բանակցային հարթակում: Գաղթականության հարցը Հայաստանի Հանրապետության անունից առաջին անգամ օսմանյան Թուրքիայի ներկայացուցիչների առջև պաշտոնապես դրվել է Բաթումի բանակցությունների երկրորդ՝ ավարտական փուլում (1918 թ. մայիսի 30 - հունիսի 5)¹: Այդ շրջանում գաղթականության հարցի շուրջ քննարկումները և դրանց արդյունքները կարևոր են Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին քաղաքականության և դիվանագիտության սկզբնավորման շրջանի, ինչպես նաև գաղթականության պատմության ուսումնասիրության համար:

1918 թ. մայիսի 26-ի ուշ երեկոյան Բաթումում թուրքական վերջնագրի² ներկայացումով օսմանյան Թուրքիայի և Անդրկովկասյան հանրապետության ներկայացուցիչների միջև ընթացող բանակցությունները ընդմիջվել են³: Այդպես ավարտվել է մայիսի 11-ին պաշտոնապես սկսված Բաթումի բանակցությունների առաջին փուլը: Բաթումում բանակցությունների ընդհատումը պայմանավորված էր բանակցային գործընթացում առաջացած անհաղթահարելի խոչընդոտներով, որոնց հետևանքով Անդրկովկասի դաշնային հանրապետությունը կազմալուծվել է: 1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասի սեյմը հայտարարել է իր լիազորությունները ցած դնելու և դաշնային Անդրկովկասի կազմալուծման մասին⁴: Դրանից հետո Վրաց ազգային խորհուրդը հանդիսավոր պայմաններում հայտարարել է Վրաստանի անկախությունը⁵: Նույն օրը երեկոյան ժամը 10-ին Բաթում է հասել Անդրկովկասյան սեյմի լուծարման և Վրաստանի անկախության հայտարարման մասին հեռագիրը: Միաժամանակ ստացվել է Բաթումի բանակցություններում օսմանյան պատվիրակության ղեկավար Խալիլ Բեյի ստորագրությամբ անդրկովկասյան պատվիրակության ղեկավարին ուղղված թուրքական վերջնագիրը⁶: Բաթումում թուրքական պատվիրակության ներկայացուցիչը հայտարարել է, «որ Սեյմի ցրումով ինդիրը չի փակվում, և որ վերջնագիրը այժմ վերաբերում է Անդրկովկասի Հանրապետութիւնը կազմող ժողովուրդներին ջոկ-ջոկ»⁷: Դրանով Բաթումի բանակցություններն ընդմիջվել են՝ հնարավորություն տալով հայերի, վրացիների և Կովկասի թաթարների ներկայացուցիչներին ճշտելու թուրքական վերջնագրի նկատմամբ իրենց ազգային-քաղաքական և Նորաստեղծ պետական կառավարման ղեկավար մարմինների վերաբերմունքը: Թիֆլիս վերադառնալուց առաջ անդրկովկասյան պատվիրակության հայ ներկայացուցիչներ Ա. Խատիսյանը և Յ. Քաջազնունին մայիսի 27-ի կեսօրին հանդիպել են օսմանյան պատվիրա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և կյուբերի ժողովածու, վավ. 23ա, էջ 44-45:

² Տե՛ս նույն տեղում, վավ. 7, էջ 15-16:

³ Տե՛ս Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, «Հայկարի» տպ., 2010, հավելված 1, Ա. Խատիսյանի օրագիր, էջ 164:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և կյուբերի ժողովածու, վավ. 8, էջ 16:

⁵ Տե՛ս Հայոց պատմություն, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), հ. 4, գիրք առաջին, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 14:

⁶ Տե՛ս Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, «Հայկարի» տպ., 2010, հավելված 1, Ա. Խատիսյանի օրագիր, էջ 164:

⁷ Տե՛ս Ա - ԴՈ (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Հայութեան երկունքը, Հայաստանի պատմության թանգարան, Երևան, 2014, էջ 407:

կուրթյան ղեկավարներ խալիլ բեյի և Վեհիբ փաշայի հետ՝ վերջիններին հրավերով¹: Յանդիպման ժամանակ թուրքական կողմից ստացվել է հավաստիացում, որ վերջնագիրը ընդունելու պայմաններում «թուրքերը ոչինչ չեն ունենալու Անդրկովկասի սահմաններում Յայաստանի կազմավորման դեմ»²: Խալիլ բեյը ինդրել է վերջնագրին պատասխան տալ հայկական կառավարության անունից, ասելով, որ ինքը կապասի մինչև 30-ի երեկոյան և որ ինքը լավ հասկանում է հայերի և Յայաստանի դրությունը, և այս խաղաղության ստորագրումից հետո հուսով է, որ տարածքների հարցով թուրքերը և հայերը կզան համաձայնության³: Նույն օրը երեկոյան հայ պատվիրակները մեկնել են Թիֆլիս⁴:

«Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության»⁵ պայմաններում մայիսի 28-ին Թիֆլիսում Յայոց ազգային խորհուրդի կայացած երկու նիստերում քննարկվել է թուրքերի վերջնագրի ընդունման հարցը: Առաջին նիստում թուրքական վերջնագիրը մերժվել է⁶: Բաթումից վերադարձած Ա. Խատիսյանը և Յ. Զաջազունին հասցրել են մասնակցել միայն Յայոց ազգային խորհուրդի մայիսի 28-ի ուշ երեկոյան կայացած երկրորդ նիստին⁷: Յոգուտ վերջնագրի ընդունման նրանց համոզիչ ելույթներից հետո Յայոց ազգային խորհուրդը ձայների չնչին մեծամասնությամբ ընդունել է թուրքերի վերջնագրի պայմանները⁸: Միաժամանակ Յայոց ազգային խորհուրդը Բաթում ուղարկելու համար կազմավորել է պատվիրակություն՝ «տալով նրան ընդարձակ և վճռական լիազորություններ՝ նոր բանակցությունների միջոցով հաշտության գործը շուտափույթ ավարտելու համար»⁹: Այդ պատվիրակության կազմում ընդգրկված են եղել Ա. Խատիսյանը (պատվիրակության նախագահ), Մ. Պապաջանյանը և Յ. Զաջազունին¹⁰:

Յայոց ազգային խորհուրդը հանձնարարել է իր նորակազմ պատվիրակությանը՝ թուրքական վերջնագրի ծանր պայմաններն ընդունելու հետ մեկտեղ Բաթումում օսմանյան Թուրքիայի ներկայացուցիչների առջև բարձրացնել նաև հայկական կողմի համար կարևոր նշանակություն ունեցող հինգ պահանջներ¹¹: Դրանք նորաստեղծ Յայաստանի Յանրապետության տարածքը և սահմանները ընդլայնելու¹², Էջմիածինը հանրապետության սահմանների մեջ թողնելու, երկրի «ներքին կարգապահու-

¹ Տե՛ս Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, հավելված 1, Ա. Խատիսյանի օրագիր, էջ 164:

² Տե՛ս նույն տեղում, էջ 164-165:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 164:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 165:

⁵ Տե՛ս Յայաստանի Յանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 12, էջ 18:

⁶ Տե՛ս Յ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, «Բարձրագույն դպրոց», 1997, էջ 244:

⁷ Տե՛ս Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, հավելված 1, Ա. Խատիսյանի օրագիր, էջ 165:

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Տե՛ս Յայաստանի Յանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 11, էջ 18:

¹⁰ Տե՛ս Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, հավելված 1, Ա. Խատիսյանի օրագիր, էջ 165:

¹¹ Տե՛ս Յայաստանի Յանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 23ա, էջ 43:

¹² Տե՛ս Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, հավելված 1, Ա. Խատիսյանի օրագիր, էջ 166:

թեան և սահմանների պաշտպանութեան համար» զինվորական ուժ ունենալու, «գրաւելիք վայրերի հայերին զինակոչի չենթարկելու» և հայ գաղթականների տունդարձի մասին պահանջներն էին¹: Վերջին երկու պահանջները անմիջապէս կապված էին գաղթականության հարցի լուծման հետ:

Ինչպէս տեսնում ենք, Բաթումում դրվել է գաղթականների տունդարձի հարցը: Մեծաթիվ գաղթականությանը սովի և համաճարակների ճիրաններից փրկելու իրական ուղիներից է եղել նրանց հայրենի բնակավայրեր վերադարձնելու արտաքին քաղաքական խնդրի անհետաձգելի լուծումը: Հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների օրակարգում հայ փախստականների տունդարձի հարցը դրվել է գաղթականների պահանջով: Այսպէս, 1918 թ. մայիսի 5-ին նման խնդրանքով Գևորգ Ե կաթողիկոսին են դիմել Ալեքսանդրոպոլում կուտակված Կարսի նահանգի հայ փախստականները²: «Կարս նահանգի տասնեակ հազարաւոր փախստական» հայերի անունից Ալեքսանդրոպոլի Ս. Փրկիչ եկեղեցու բակում հավաքված ժողովականները նշելով, «որ քրդական և թրքական հորդաների հրից ու սրից ազատուած մեր ընտանիքները սովից և զանազան վարակիչ հիւանդութիւններից պիտի կոտորուին, որոնց ազատելու համար զրկուեցինք մեր ինչքից և կարողութիւններից», «աղերսագին խնդրանքով» դիմել են Վեհափառ կաթողիկոսին. «1. կամ միջնորդել, ուր որ հարկն է, մեր ընտանիքների կեանքն ապահովելու, 2. կամ եվրոպական կռուղ կամ չեզոք պետութիւններից որևէ մեկի հովանաւորութեան տակ մեր ընտանիքների կեանքի և կայքի ապահովութեան խոստումով վերադարձնել մեզ մեր հայրենիքն աշխատելու և շենացնելու»³: Հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում գերիշխող դիրք և Հայոց ազգային խորհրդում հարաբերական մեծամասնություն ունեցող դաշնակցական կուսակցությունը իր հերթին նույնպէս արտահայտվել է գաղթականների վերադառնալուն «ամեն կերպ նպաստելու» օգտին⁴:

«Ստեղծված նոր քաղաքական և ռազմական ծանր պայմաններում»⁵ նախ պետք է լուծվեր խուճապահար հայ ազգաբնակչության համընդհանուր գաղթի առջևն առնելու խնդիրը: Թուրքական զինված ուժերի առաջխաղացման ընթացքում, ինչպէս նաև նվաճված գավառներում նրանց և թուրք-թաթարական ու քրդական անկանոն զինված ջոկատների դրսևորած հայաջինջ գործելակերպը անմիջապէս դրդել է հայ ազգաբնակչությանը տեղահանվել և բռնել գաղթի ճանապարհը: Հայաստանի գրավված գավառներում թուրքական այդ քաղաքականության դրսևորումներից են եղել հայազգի տղամարդկանց զինակոչելու, նաև պարտադիր աշխատանք կատարելու պատրվակով հավաքագրելը, տեղափոխելը այլ վայրեր, այնուհետև ոչնչացնելը: «Հասան Երևան նաև փախստական հայեր Շիրակի գիւղերից՝ բերելով իրենց հետ սկզբում անհաւատալի լուրեր տաճիկների գործողութիւններից: Անունը՝ երիտասարդ և զէնք կրելու ընդունակ տղամարդ չմնաց գիւղերում, բոլորին հաւաքեցին ու տարան, բայց հայտնի չէ, թե ուր,- գրել է Հ. Տեր-Մարտիրոսյանը,- Այս էր կրկնուող լուրը,

¹ Տե՛ս Ա. - ԴՈ (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Հայութեան երկունքը, էջ 409:

² Տե՛ս Կ. Ալեքսանյան, Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ., փաստաթղթերի ժողովածու, Երևան, «Հայկարլի» տպարան, 2012, էջ. 183-184:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 201, ց. 1, գ. 36, թ. 84:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և կյութերի ժողովածու, վավ. 11, էջ 18:

որ գնալով իրականութիւն էր դառնում և նոր սարսափների տեղիք տալիս: Տաճկական մեթոդը այժմ սկսւում էր կիրառել Կովկասի սահմանների մէջ, Շիրակի գիւղերում, Արարատեան դաշտից ոչ հեռու: Գնալով դրութիւնը ծանրանում էր, հասնող լուրերը դառնում էին հետզհետեւ ահաբեկող»¹: Ինչպէս վկայել է Զ. Տեր-Մարտիրոսյանը, Շիրակի գյուղերից «հաւաքեցին աւելի քան 7000 զինւորական տարիքի երիտասարդներ ու քեցցին դէպի Կարս-Էրզրում, որտեղից նրանք այլևս չվերադարձան», իսկ մայիսի 25-ի լույս 26-ի գիշերը Ձիթահանքով գյուղի մոտ «գազանաբար ընկան աւելի քան 3000 անմեղ հոգիներ»²: Գրավված գավառների բնակավայրերից հայ տղամարդկանց զինակոչի և պարտադիր աշխատանքի չենթարկելու պահանջները թուրքերի կողմից ընդունելը կհանգեցնէր հայ ազգաբնակչության գաղթը խթանող երկու կարևոր դրոպապատճառների վերացմանը:

1918 թ. մայիսի վերջին տեղահանված և Յայաստանում, Անդրկովկասում ու Յուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականների թվաքանակը ահռելի չափերի էր հասել: «Անդրկովկասի սահմանների մէջ, բացի Բաբելի և Գանձակի նահանգների հայերից, տեղահանուած հայ ժողովրդի քանակը այդ կարճ շրջանում³ հաշււում էր 700. 000,- նշել է Զ. Տեր-Մարտիրոսյանը (Ա - ԴՈ),- որից տաճկահայեր՝ 250. 000, Կարսի նահանգից, Բաթումի, Արդւինի, Ախալքալակի և Ախալցխայի շրջաններից՝ աւելի քան 200. 000, Սուրմալի, Սարդարաբադի, Ալէքսանդրապոլի, Փամբակի և Լօռայ շրջաններից դարձեալ աւելի քան 200. 000 հոգի»⁴: Բնական է, որ գաղթականության հոսքի նմանօրինակ ծավալները ստիպել են Յայոց ազգային խորհրդին դիմել որոշակի քայլերի՝ համընդհանուր գաղթը դադարեցնելու համար: Այսպէս, մայիսի 22-ին, երբ Թիֆլիս լուրեր են հասել, որ թուրքական զորքերը օր առաջ ներխուժելու են Անդրկովկասի մայրաքաղաք, «գաղթը, փախուստը, խուճապը սկսւեց...գաղթը սկսւեց Արևմտահայ Ապահովութեան խորհրդի շարժումով» և «սրտաճմլիկ այդ հոսանքը... քշել էր մեկ օրում աւելի քան 10000 հոգի...»⁵, Այդ օրերին Թիֆլիսում տարածվել էին «դիտաւորեալ ու չարամիտ լուրեր», որոնք ստիպել են Յայոց ազգային խորհրդին մայիսի 25-ին՝ փաստորէն առաջին անգամ հրապարակաւ հանդես գալու գաղթի վերաբերյալ հայտարարությամբ: «Զաղաքում տարածուում են դիտաւորեալ ու չարամիտ լուրեր այն մասին, թէ հայ գաղթականները դէպի հիւսիս անցնելով՝ ինչ որ ռազմական նպատակների են հետապնդում և այդ, իբրև թէ, Յայոց Ազգային խորհրդի ներշնչումով ու հրահանգներով,- ասվել է Յայոց ազգային խորհրդի հայտարարության մէջ: Յայտարարում ենք, որ դժբաղդ ժողովրդի այս աղէտաւոր գաղթը, սկսւած Ալէքսանդրապոլի և շրջանի յանկարծակի և անակնկալ գրաւումից յետոյ, ուրիշ պատճառ չունի և չի կարող ունենալ, բացի օսմանեան զօրքերի առաջխաղացութիւնը, որի առաջից խաղաղ հայ ազգաբնակչութիւնը խուճապի մատնուած թողնում է տուն, տեղ, տնտեսութիւն և իսպառ աւերուած՝ խույս է տալիս մեր սահմաններից: Զաղաքական ու ռազմական իրադարձութիւնների անկայուն վիճակը տարաբաբար դարձար հնար չտւին Ազգային խորհրդին վճռապէս դէմ լինել և

¹ Ա - ԴՈ (Հովհաննէս Տեր-Մարտիրոսյան), Յայութեան երկունքը, էջ 330-331:

² Տէ՛ս նույն տեղում, էջ 389:

³ Խոսքը մայիսի 20-ից մինչև մայիսի 30-ը ընկած ժամանակահատվածի մասին է, տէ՛ս Ա - ԴՈ (Հովհաննէս Տեր-Մարտիրոսյան), Յայութեան երկունքը, էջ 392:

⁴ Ա - ԴՈ (Հովհաննէս Տեր-Մարտիրոսյան), Յայութեան երկունքը, էջ 392:

⁵ Նույնը, էջ 394:

արգելել սկսած աղետաւոր տեղահանութիւնը, սակայն պետք ենք համարում յայտարարել, որ Ազգային խորհուրդը չի կարող քաջալերել այդ գաղթը»¹:

Հասկանալի է, որ թուրքերի կողմից գրաված կամ գրավելու վտանգի տակ գտնվող գավառներում հայ ազգաբնակչության տեղահանությունը և գաղթը կասեցնելու համար անհրաժեշտ է եղել թուրքական կողմից ստանալ անվտանգությունն ապահովող որոշակի երաշխիքներ: Հատկանշական է, որ նման երաշխիքի հարցը դրվել էր դեռևս Բաթումի բնակչությունների առաջին փուլում: Ինչպես վկայել է Ա. Խատիսյանը, մայիսի 17-ին կամ 18-ին Բաթումում Անդրկովկասի պատվիրակության հայ անդամները ստացել են Սեյմի դաշնակցության խմբակցությունից Խ. Կարճիկյանի ստորագրությամբ հեռագիր, որի «մէջ ինդրած էր մեզմէ» «երեք բան, ա) որ գերմանացիք պաշտպանեն Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղագիծը, բ) որ հայկական զօրքերը մասն իրենց դիրքերուն մէջ երկաթուղիի երկու կողմերու վրայ եւ գ) որ հաշտութեան պատուիրակութիւնը, եթէ ստանայ այս երաշխիքները, հրատարակէ կոչ մը ուղղուած ժողովուրդին՝ հանդարտ մնալու իրենց տեղերը»²: «Մենք անմիջապէս դիմեցինք Չոր. Ֆոն Լոսովին եւ Խալիլ պէյին այդ երեք պահանջները իրագործելու համար, - գրել է Ա. Խատիսյանը,- Չոր. Ֆոն Լոսովը յայտնեց, թէ թուրքերը շատ քիչ հաշուի կաննեն իր բողոքները, բայց խոստացաւ այդ մասին յարաբերութեան մէջ մտնել իր կառավարութեան հետ: Խալիլ պէյը եւ Վեհիպ փաշան պատասխանեցին. «Ինչի են պետք ձեզ գերմանացիները: Մենք ինքներս կրնանք ձեզ հետ համաձայնութեան գալ: Թող բնակչութիւնը մնայ իր տեղը»: Չստանալով որեւէ երաշխիք՝ մենք որեւէ կոչ չհրատարակեցինք»³:

Այնուամենայնիվ, գաղթը դադարեցնելու համար անհրաժեշտ է եղել առաջին հերթին դիմել ազգաբնակչությանը և համապատասխան հրահանգ իջեցնել տեղական կառավարման ազգային մարմիններին: Հայոց ազգային խորհուրդը իր 1918 թ. մայիսի 30-ի հայտարարության երկրորդ մասում «վճռապէս» հրահանգել է «թէ արդեն թշնամուց գրավված և թէ վտանգի տակ համարվող հայ գավառների ազգաբնակչությանը դադարեցնել գաղթը և մնալ իրենց տեղերում»⁴: Պատահական չէ, որ հրահանգը տեղադրվել է Թուրքիայի ներկայացուցիչների հետ բնակչություններ վարելու համար Հայոց ազգային խորհրդի կողմից Բաթում պատվիրակություն ուղարկելու մասին հայտարարության մեջ:

Հայտարարությունում գաղթի դադարեցման անհրաժեշտությունը հիմնավորվել է այն հանգամանքով, որ «ինչ էլ լինեն տեղական պայմանները, տեղահանությունը շատ ավելի կորստաբեր է և կործանարար, քան Լույսիսկ ծանր պայմաններում հայրենի հողի վրա ապրելը»⁵: Երևանի Հայոց ազգային խորհրդի մայիսի 23-ի կոչում հայ ազգաբնակչությանը ներկայացվել է գաղթը դադարեցնելու մասին ևս երկու պատճառ: Առաջին, թուրքերի կողմից Ղարաքիլիսայի գրավումից հետո Ախտայում (Հրազդան) կուտակվել է «հարիւր հազարանոց» գաղթականություն և այլևս «գաղթելու

¹ Երևան, 1996, էջ 396:

² Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 73:

³ Երևան, 1996:

⁴ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և կյութերի ժողովածու, վավ. 11, էջ 18:

⁵ Երևան, 1996, վավ. 11, էջ 18:

տեղ չկայ»¹: Այնուհետև բերվել է երկրորդ պատճառը. «Իմացք և հետևեալը: Երբ տաճիկները մի որևէ տեղ տիրապետում են, այնտեղից փախած ժողովրդին նրանք այլևս թոյլ չեն տալիս վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը: Ուրեմն երկու չարիքից ամենափոքրագույնը այն է, որ ժողովուրդը չգաղթի և մնա իր տեղերում»²: Փաստորեն, հայ ազգաբնակչությունը զգուշացվել է, որ դիմելով գաղթի՝ ամենայն հավանականությամբ, կանգնելու է հայրենագրության վտանգի առաջ:

Գաղթը դադարեցնելու մասին Հայոց ազգային խորհրդի քաղաքական որոշումը բխել է գաղթի ծանր հետևանքների մասին տարբեր տեղերից ստացվող համապատասխան տեղեկատվությունից և հիմնվել գաղթը կասեցնելու վերաբերյալ պահանջների վրա: Գաղթականական արտակարգ հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Եպիսկոպոսը Գևորգ Ե կաթողիկոսին Ղարաբիլիսայից 1918 թ. մայիսի 21-ին ուղղված գրությունում հայտնել է, որ «Ալեքսանդրապոլի գրաւումը տաճիկների կողմից նոր աղետի դուռ բացեց և յանձնաժողովը այլևս ծրագրային գործ կատարելու մասին մտածել անգամ չի կարողանում: Անկարագրելի է գաղթականութեան վիճակը: Մահացութեան դէպքեր են սկսել ծայր առնել, կերակրել և տեղաւորել այս մարդկանց հնարաւորութիւնից հեռու է»³: Այնուհետև նշելով, որ «այստեղի բոլոր շրջանների միաձայն կարծիքն է, որ եթէ Երևանի կողմից ևս ժողովուրդը շարժուելու լինի, կը լինի սոսկալի աղետ»: Նա եկել է այն միանշանակ եզրահանգման, որ «միակ փրկութիւնը կ'լինի, որ ժողովուրդն իր տեղում մնայ, որով գուցէ ապահով սովամահից կարողանայ ազատուել»⁴:

Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունը Թիֆլիսից մեկնել է մայիսի 29-ին և հաջորդ օրը՝ ցերեկը ժամը 2-ին ժամանել Բաթում⁵: Հայոց ազգային խորհրդի վերը նշված 5 պահանջները Ա. Խատիսյանի ղեկավարած պատվիրակությունը թղթին է հանձնել Թիֆլիսից Բաթում ճանապարհին: Իր օրագրում նա նշել է, որ ամենուրեք տիրող քաոսի, աղմուկի, նյարդային և անկակազմակերպ վիճակի պատճառով «մենք ուղղակի չգիտեինք թե ինչ են մեզ հանձնարարել: Որոշեցինք գնացքում հանգիստ քննարկել իրավիճակը և ինքներս գտնել ելքը՝ ընդհանուր մանդատի⁶ հիման վրա»⁷: Մայիսի 30-ին ժամը 5-ին հայկական պատվիրակությունը հանդիպել է թուրքական պատվիրակության ղեկավար Խալիլ բեյին⁸: Դրանով սկսվել են Բաթումի բանակցությունների ավարտական երկրորդ փուլը:

Բնական է, որ Հայաստանի Հանրապետության անունից առաջին անգամ հանդես եկող պատվիրակության անդամները կանխավ քննարկել են Բաթումի բանակցություններում իրենց գործեակերպը և մշակել բանակցություններում պատվիրակության մարտավարությունը: Բանակցությունների մասին հունիսի 6-ին Հայոց ազգային խորհրդին ներկայացված զեկուցումում Ա. Խատիսյանը հայտնել է, որ օսմանյան

¹ Ա - ԴՈ (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Հայութեան երկունքը, էջ 418:

² Նույն տեղում:

³ Կ. Ալեքսանյան, Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ., Փաստաթղթերի ժողովածու, Երևան, էջ. 185:

⁴ Նույն տեղում, էջ 186:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ. 165:

⁶ Խոսքը պատվիրակության լիազորությունների մասին է:

⁷ Տե՛ս Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, հավելված 1, Ա. Խատիսյանի օրագիր, էջ 165:

⁸ Տե՛ս նույն տեղում:

Թուրքիայի ներկայացուցիչների հետ բանակցությունները սկսելու համար Հայաստանի պատվիրակությունը՝ թուրքական վերջնագիրը ընդունելու հետ կապված, նախատեսել է երեք մոտեցում, որ հանձնվել է թղթին և առանձին-առանձին տեղադրել համապատասխան ծրարներում¹: Ա. Խատիսյանը նշել է, որ այդ ծրարներից մեկում եղել է այն որոշումը, որ «սկզբունքով» ընդունում էինք վերջնագիրը, «թողնելով մանրամասնությունները, միևնույն վերջնագիրը չէինք ընդունում, երրորդը՝ վերջնագիրը ընդունում էինք առանց այլևայլութան»²:

Մայիսի 30-ին թուրքական պատվիրակության ղեկավարության հետ առաջին հանդիպման ժամանակ Հայաստանի պատվիրակությունը հայտնել է վերջնագիրը ընդունելու մասին Հայոց ազգային խորհրդի որոշման վերաբերյալ: Հայաստանի պատվիրակությունը պարտադրված լինելով ընդունել թուրքական վերջնագիրը՝ բանակցությունների հենց սկզբից կիրառել է հարձակողական մարտավարություն: Դրսևորելով արժանապատիվ կեցվածք և գերծ մնալով պարտվողի համար բնորոշ կրավորական դիրքից՝ հանդես է եկել ինչպես հավասարը հավասարի հետ: Դրավկայությունն է այն, որ մերժելով Բաքվի հետ կապված թուրքական կողմի նոր պահանջը³, թուրքական պատվիրակության առաջ դրել է 5 պահանջ⁴: «Վեհիբ փաշան առաջարկեց ստորագրել վերջնագիրը,- նշել է իր հուշերում Ա. Խատիսյանը,- ազնիվ խօսք տալով հնարաւոր սրբագրումներն անել»⁵: «Մենք միաձայն որոշեցինք այդ ձևով ընդունել: 30-ին ժ. 8-ից 20 ը. պակաս տվինք մեր գրավոր համաձայնությունը»⁶: Ինչպես տեսնում ենք, Հայաստանի պատվիրակությունը Բաթումի բանակցությունների ավարտական փուլում նախընտրել է իր կողմից մշակված մոտեցումներից առաջինը: Այստեղ հայկական պատվիրակությունը չի խուսանալով թուրքական կողմին ներկայացնել նորահռչակ հանրապետության համար կարևոր և առաջնահերթ նշանակություն ունեցող վերջնական 5 պահանջները, որոնցից երկուսը անմիջապես վերաբերել են գաղթականությանը:

1918 թ. մայիսի 31-ին, առավոտյան ժամը 10-ին մասնավոր նիստ է տեղի ունեցել Վեհիբ փաշայի մոտ, որտեղ հանրապետության պատվիրակները նորից ներկայացրել են վերջնական 5 պահանջները⁷: Նույն օրը երեկոյան 6-ից մինչև գիշերը ժամը 2-ը պատվիրակությունները մանրամասն քննության են առել հայ-թուրքական պայմանագրի սևագիրը, որը «տեքստում չնչին փոփոխություններով ու տարածքի որոշ ավելացումով» պատրաստ է եղել հաջորդ օրը ստորագրության⁸: Ինչպես նշել է իր օրագրում Ա. Խատիսյանը. «Գիշերը ժամը 2-ին մենք վերադարձել ենք տուն: Հատուկ

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 23ա, էջ 43:

² Ա - ԴՈ (Յուրիանես Տեր-Մարտիրոսյան), Հայություն երկուսքը, էջ 410:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 23ա, էջ 43:

⁵ Ա - ԴՈ (Յուրիանես Տեր-Մարտիրոսյան), Հայություն երկուսքը, էջ 410:

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 23ա, էջ 43:

⁷ Տե՛ս Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, հավելված 1, Ա. Խատիսյանի օրագիր, էջ 166:

⁸ Տե՛ս նույն տեղում:

տրամադրությամբ՝ կա Հայաստան, բայց փոքր, վիրավորված»¹: Հաջորդ օրը հունիսի 1-ի ցերեկը ժամը 3-ին ստորագրվել է պայմանագրի սևագիր տարբերակը²:

Հայոց ազգային խորհրդին ներկայացված զեկուցման մեջ Ա. Խատիսյանը նշել է, որ Բաթումում գաղթականության հարցի շուրջ «երկար խոսեցինք»³: Բաթումի բանակցությունների օրակարգում դրվել էր կործանարար և կորստաբեր գաղթը դադարեցնելու հարցը: Գաղթը կանգնեցնելու համար թուրքական երաշխիքները, ամենայն հավանակությամբ, ձեռք են բերվել մայիսի 30-ին և 31-ին՝ թուրքական պատվիրակության հետ հանդիպումների ժամանակ: Հայկական պատվիրակությունը կարողացել է հասնել նրան, որ թուրքական կողմը տվել է համատասխան երաշխիքներ: Ընդ որում, այդ երաշխիքների մասին հավաստիացումները հնչել են ոչ միայն բանակցությունների ժամանակ՝ փակ դռների ետևում, այլև Վեհիբ փաշայի հատուկ հայտարարությամբ՝ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին ուղղված մայիսի 30-ի ռադիոհեռագրով:

Այստեղ Վեհիբ փաշան նշել է իր բանակի «մարդասիրական վերաբերմունքը» նոր գրավված տարածքներ վերադարձող խաղաղ ազգաբնակչության նկատմամբ՝ առանց ազգության և դավանանքի խտրականության: Նա հավաստիացրել է, որ ընդունում է հայ ազգաբնակչությանն իր պաշտպանության ու հովանարության տակ՝ ապահովելով նրանց գույքի, պատվի և կյանքի անձեռնմխելիությունը⁴: Ռադիոհեռագրի վերջում նա նորից նշել է, որ իրենց խաղաղ գործերով զբաղվող հայ ազգաբնակչությանը «տրուում է լիակատար երաշխաւորութիւն և նոքա կարող են մնալ իրենց տեղերում, այն խորին համոզմունքով, որ կարող են օգտուել բարեկեցութեամբ, պաշտպանութեամբ Օստոմանեան կառավարութեան, որով օգտուում են հայերը՝ ապացուցանելով իրանց հաւատարմութիւնը, ապրելով թիկունքում»⁵: Ռադիոհեռագիրը նա ավարտել է՝ խնդրելով Վեհափառ կաթողիկոսին «ընդունել Ձեր սրբազան հովանաւորութեան տակ կեանքը, պատիւը, գոյքը տաճիկ այն ժողովրդի, որոնք գտնուում են դեռ չը գրաւած իմ գորքով շրջաններում – Կ. Յ.]»⁶: Ինչպես տեսնում ենք, Վեհիբ փաշան տալով հայերին գույքի, պատվի և կյանքի անձեռնմխելիության երաշխիքներ՝ փոխադարձության սկզբունքով նույնը պահանջում է մահմեդական ազգաբնակչության համար:

Վեհիբ փաշայի ռադիոհեռագրի պատճեն կաթողիկոսի դիվանը մայիսի 31-ին ուղարկել է Երևանի Հայոց ազգային խորհրդին⁷: 1918 թ. հունիսի 2-ին Երևանի Հայոց ազգային խորհրդին ուղարկված նամակում ներկայացնելով անկախ Հայաստանի անունից հանդես եկող պատվիրակության բանակցություններում ձեռք բերված նախնական արդյունքները՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը նշել է, որ «անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր ջանքերը, որ հայությունը չգաղթի գրավված մարզե-

¹ Նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 23ա, էջ 44:

⁴ Տե՛ս Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 2, թ. 347:

⁵ Նույն տեղում, թ. 338-ի հակ.:

⁶ Նույն տեղում, նաև՝ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 2, թ. 347:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 2, թ. 337:

րից»¹: Ի հետևումս դրանց՝ 1918 թ. հունիսի 2-ի Բաթումի պայմանագրով Թուրքիային անցնող հայկական տարածքներից չարտագաղթելու մասին հայ ազգաբնակչությանը ուղղված կոչում Երևանի Ազգային խորհուրդը ազդարարել է, որ «Բաթումի դաշնագրությամբ օսմանյան պետությանն անցնող գավառների հայ ազգաբնակչությանը Կենտրոնական Ազգային խորհրդի և օսմանյան պետության միջև կայացած համաձայնության հետևանքով որոշված է թողնել իրենց տեղը: Օսմանյան պետությունը խոստացել է ապահովել այդ ժողովրդի ինչքը և պատիվը, որի մասին Վեհիբ փաշան հեռագրով հաղորդել է Վեհափառ Կաթողիկոսին»²: Այստեղ միաժամանակ ասվել է, որ Վեհիբ փաշայի կողմից տրված երաշխիքները իրագործելու համար Երևանի Ազգային խորհուրդը «միջոցների է դիմում այդ գավառակներում թուրքական զորք դնել՝ ժողովրդի պաշտպանության համար»: Արդյունքում՝ «Երևանի Ազգային խորհուրդը գտնելով գաղթը կորստաբեր, իր կողմից ևս կարգադրում է մնալ մայրենի երկրի վրա և զբաղվել իր խաղաղ աշխատանքով»³:

Բաթումի բանակցությունների արդյունքներից մեկն էլ հանդիսացել է թուրքական կողմի այն վստահեցումը, որ փախստական հայ «ժողովուրդը կարող է դառնալ այն երկրները, որ հիմա գրավված է մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Իսկ 2-3 շաբաթից հետո Ղարս և Բաթումներ կարող են վերադառնալ»⁴: Այնուհետև Ա. Խատիսյանը ավելացրել է, որ «մենք այն տպավորությունն ստացանք», որ Բաթում և Կարս գաղթականությանը «շուտով կարելի է տեղափոխել», իսկ Կարս և Բաթում քաղաքներ կարող է թույլատրվել «պատգամավորության միջոցով»⁵: Հայ-թուրքական բանակցությունների հետևանքով Բաթումում փաստորեն ստացվել է թուրքական կողմի համաձայնությունը արևելահայ գաղթականների տունդարձի վերաբերյալ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև «Նախիջևանից և Ջուլֆայից զորքի ու գաղթականության»՝ հանրապետության սահմանները տեղափոխելու մասին: Ընդ որում նրանք կարող էին «ոտով կամ երկաթուղով, գնեքով» գալ հայրենիք: Այդ կապակցությամբ՝ «կրթերը հանգստացնելու համար», առաջարկվել է Վեհիբ փաշայի հետ միասին ճանապարհվել Ջուլֆա⁶:

Անհրաժեշտ է նշել, որ Բաթումի բանակցություններում հայկական պատվիրակությունը բարձրացրել է նաև արևմտահայ փախստականների տունդարձի հարցը: Այսպես, օրինակ, բանակցությունների ավարտի հետ կապված իր պատասխան խոսքում Ա. Խատիսյանը ասել է, որ «հայ ժողովուրդը ակնկալում է խաղաղություն և հավիտենական համաձայնությունն տաճիկների հետ: Հույսով է, որ տաճկահայերը կվերադառնան իրենց հայրենիքը՝ շիտակ քաղաքացիներ օսմանյան կառավարության»⁷:

¹ Տե՛ս նույն տեղում, վավ. 22, էջ 41:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և կյուրթերի ժողովածու, վավ. 20, էջ 36:

³ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և կյուրթերի ժողովածու, վավ. 20, էջ 36:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և կյուրթերի ժողովածու, վավ. 23ա, էջ 45:

⁷ Նույնը:

Բաթումում 1918 թ. հունիսի 4-ին Կենտրոնական Հայոց ազգային խորհրդի պատվիրակներ Ա. Խատիսյանը, Յ. Զաչագունին և Ս. Պապաշանյանը՝ մի կողմից, և օսմանյան Թուրքիայի ներկայացուցիչներ Խալիլ բեյը և Վեհիբ փաշան՝ մյուս կողմից, ստորագրեցին «Կայսերական Օստոմանյան Կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև Հաշտության և բարեկամության պայմանագիր»¹: Այդ պայմանագրի ստորագրումը նշանակել է Հայաստանի Հանրապետության «դե յուրե» ճանաչումը²: Սակայն գաղթականության հարցը պայմանագրի տեքստում տեղ չի գտել³: Պայմանագրի 10-րդ հոդվածում ամրագրվել է կողմերի իրավասության ներքո գտնվող տարածքներում բնակիչների և համայնքների անշարժ գույքի նկատմամբ սեփականության և համապատասխան կարգով այն տնօրինելու ու օգտագործելու իրավունքը: Այստեղ արձանագրվել է նաև սեփականության իրավունքով բնակիչներին և համայնքներին պատկանող գույքի անձեռնմխելիության սկզբունքը, համաձայն որի «ոչ ոք չի կարող զրկվել իրեն պատկանող այդ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից այլ կերպ, քան հանրային օգուտի նկատառումներով և միշտ փոխհատուցման դիմաց»⁴: Անշարժ գույքի անձեռնմխելիության սկզբունքը Բաթումի հայ-թուրքական պայմանագրում ամրագրելու հանգամանքը որոշ հույսեր է ներշնչել գաղթականներին: Մի կողմից՝ ինչ որ չափով այն կարող էր կանխել իրենց բնակավայրերում գաղթականների թողած անշարժ գույքի նկատմամբ թուրք-թաթարական խաժամուժի ոտնձգությունները, մյուս կողմից՝ գաղթականների վերադարձի ժամանակ առանց իրավական որոշակի խոչընդոտների կարող էին հավակնել և նորից տիրանալ իրենց պատկանող անշարժ գույքին:

Բաթումի պայմանագիրը ստորագրելուց հետո Ա. Խատիսյանը գրավոր դիմել է Վեհիբ փաշային՝ նրան հիշեցնելով հայկական մի քանի պահանջները պայմանագրում ներառելու հայկական պատվիրակությանը տված «ազնիվ խոստումի» մասին: Խնդրել է նրան ձեռք բերված պայմանավորվածությունները գրավոր ամրագրել համապատասխան նամակով⁵: Հունիսի 5-ին Վեհիբ փաշայից ստացված նամակում գրված է, «որ 1. Հաշտութեան պայմանագրով տաճիկ կառավարութեանը անցած և անցնելիք գաւառների հայ ժողովուրդը զինւորական ծառայութեան չի ենթարկւի, իսկ անհրաժեշտ աշխատանքներ կատարել տալու դէպքում ի նկատի կառնւի նրանց բնակավայրը: 2. Տաճիկ կառավարութեանը անցած ու անցնելիք գաւառների փախստական հայ ժողովուրդը եթէ ցանկանայ վերադառնալ իր տեղը, արգելք չի լինի, բացի Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններից, որոնց մասին կարգադրութիւն կլինի յետոյ»⁶:

Ինչպես տեսնում ենք, Բաթումի հայ-թուրքական բանակցությունների ժամանակ որոշակի պայմանավորվածություններ են ձեռք բերվել հայրենի բնակավայրեր փախստականների վերադառնալու հարցի շուրջ: Կարսի, Արդահանի և Բաթումի

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 24, մաս 2, թ. 332-333 և հակ., նույնը տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ. 36-40:

² Տե՛ս Յ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 251-252:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 21, էջ. 36-40:

⁴ Նույն տեղում, էջ 40:

⁵ Տե՛ս Ա - ԴՈ (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Հայութեան երկունքը, էջ 416:

⁶ Նույն տեղում:

շրջանների հայ փախստականների վերադարձի հետաձգումը թուրքական կողմը հիմնավորել է Բրեստ-Լիտովսկի պայմանագրով այնտեղ նախատեսված հանրաքվեով¹: Այդ նամակով ամրագրվել է ցանկության դեպքում իրենց բնակավայրերը վերադառնալու հայ փախստականների իրավունքը և վերջինիս ճանաչումը թուրքերի կողմից: Սակայն «փախստական հայ ժողովրդի» տունդարձի վերաբերյալ թուրքական պատվիրակության այդ գրավոր պարտավորությունը չի պարունակել դրա իրագործման համար անհրաժեշտ իրական մեխանիզմներ, որոնց բացակայությունը հանգեցրել է նրան, որ այդ հարցին փաստացի լուծում չի տրվել: Այն, ըստ էության, թողնվել է հետագայում տեղի ունենալիք հայ-թուրքական դիվանագիտական գործընթացներին: Միաժամանակ, թուրքական կողմից ստացվել է հայ ազգաբնակչության գաղթը խթանող «հաշտութեան պայմանագրով տաճիկ կառավարութեանը անցած և անցնելիք գաւառների» հայազգի տղամարդկանց զորակոչի չենթարկելու մասին համաձայնություն: Իսկ նրանց պարտադիր աշխատանքի չհավաքագրելու հարցը մասնակի լուծում է ստացել: Հայազգի տղամարդկանց «անհրաժեշտ աշխատանքներ կատարել տալու դեպքում» պետք է հաշվի առնվեր նրանց բնակության վայրը:

Այսպիսով, Բաթումի բանակցությունների վերջին փուլում, երբ հայ պատվիրակները արդեն իսկ հանդես էին եկել անկախ Հայաստանի անունից, գաղթականության հարցը հանդիսացել է բազմակողմանի և երկարատև քննարկման առարկա²: Եվ դա բնական է, քանզի այդ ժամանակ հայ գաղթականության հետ կապված հարցերի լուծումներն անմիջապես կախված են եղել օսմանյան Թուրքիայի արտաքին քաղաքական դիրքորոշումներից և անհնարին էր առանց թուրքական կողմի համաձայնության: Բաթումի բանակցությունների շնորհիվ հայ դիվանագիտությունը կարողացել է հասնել հայ ազգաբնակչության կյանքի և գույքի անվտանգության ապահովության երաշխիքներին: Հայկական կողմը բանակցություններում ստացել է նաև հայ տղամարդկանց զորահավաքի չենթարկելու և պարտադիր աշխատանքների համար հավաքագրելու ժամանակ իրենց բնակավայրերից չհեռացնելու մասին թուրքական ներկայացուցչի գրավոր պարտավորությունը: Այդ ամենը հնարավորություն է տվել Երևանի Հայոց ազգային խորհուրդին կոչով դիմելու ազգաբնակչությանը՝ հրահանգելով հրաժարվել կորստաբեր տեղահանությունից և գաղթից: Միաժամանակ, թուրքական կողմը ճանաչել է հայ գաղթականների հայրենի բնակավայրեր վերադառնալու իրավունքը:

Карен Айрапетян, Вопрос беженцев на заключительном этапе Батумских переговоров, - Перед турецкими представителями беженский вопрос от имени вновь образованной Республики Армения впервые официально был поставлен на последнем этапе Батумских переговоров (30 мая – 5 июня 1918 г.). В результате батумских переговоров армянская дипломатия смогла добиться заявления турецкой стороны о гарантиях по обеспечению безопасности жизни и имущества армянского населения, остающегося в районах занятых или подлежащих к занятию турецкими войсками. Армянская сторона

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 26, էջ 48:

² Տե՛ս նույն տեղում, վավ. 23ա, էջ 44-45:

также получила письменное заверение турецкого представителя об отказе от военного призыва армянских мужчин и от принуждения их к принудительному труду вдали от своих поселений. Все это дало возможность ереванскому Армянскому национальному совету обратиться к населению с призывом отказаться от чреватого большими потерями ухода из своих поселений. Одновременно на заключительном этапе батумских переговоров было получено письменное заверение турецкой стороны о признании ими права армянских беженцев на возвращение к родным очагам.

Karen Hayrapetyan, Refugees' Issue in the Final Phase of Batum Negotiations, - On behalf of the Republic of Armenia, for the first time the refugees' issue was officially put before the Turkish representatives in the final phase of Batum negotiations (May 30 – June 5, 1918). As a result of Batum negotiations, the Armenian diplomacy could reach the statement of the Turkish side on guarantees of ensuring security for the Armenian people's life and property in the regions occupied or to be occupied by the Turkish troops. In the negotiations the Armenian side also received the Turkish representative's written obligation on the Armenian men's non-mobilization and non-removal from their settlements in recruiting to compulsory works. All that gave opportunity to the Armenian National Council of Yerevan to call on the Armenian population with an appeal, ordering them to refuse the ruinous deportation and migration. At the same time, in the final phase of Batum negotiations the Turkish side recognized the Armenian refugees' rights to return to their native settlements.

Կարեն Հայրապետյան – պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դասախոս, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայաստանի առաջին հանրապետության պատմության հիմնահարցերը: Մասնավորապես զբաղվում է գաղթականության և արևմտահայ փախստականների պատմության հարցերով:

